ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 976-Ա « 20 » փետրվարի 2026 թ.

«ԳՈՌ ԵՎ ՊԱՐԳԵՎ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/9515/05/17 վարչական գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների բաժնի Ե-4376-2026 գրությունը՝ Կոմիտասի պողոտայի հ.51 հասցեի անշարժ գույքով ծանրաբեռնված հողամասը՝ 11.7քմ մակերեսով ուղղակի վաճառքի միջոցով «Գոռ և Պարգև» ՍՊ ընկերությանն օտարելու մասին:

Հիմք ընդունելով ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/9515/05/17 վարչական գործով օրինական ուժի մեջ մտած վճիռը.

1.Կոմիտասի պողոտայի հ.51 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով «Գոռ և Պարգև» ՍՊԸ-ին պատկանող շինության զբաղեցրած 11.7քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարել (վաճառել) ընկերությանը՝ սույն որոշման ընդունման պահին գործող տարածագնահատման 4-րդ գոտու շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով, որը կազմում է 1.060.348 /մեկ միլիոն վաթսուն հազար երեք հարյուր քառասունութ/ ՀՀ դրամ և գումարը փոխանցել Երևանի քաղաքապետարանի 900015211320 հաշվեհամարին (հողի օտարումից եկամուտներ):

2.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝ Երևանի քաղաքապետի անունից, կնքել հողամասի ուղղակի վաճառքի մասին պայմանագիր՝ «Գոռ և Պարգև» ՍՊԸ-ի կողմից Երևանի քաղաքապետարան առուվաճառքի պայմանագիր կնքելու վերաբերյալ դիմումը, հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի և պայմանագրի նախապատրաստման համար տեղական վճարները հավաստող փաստաթղթերը, ինչպես նաև միասնական տեղեկանքը ներկայացվելուց հետո:

3. Սահմանել, որ սույն որոշման ընդունման պահից հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը հողամասի ձեռք բերողների կողմից 15-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Ընդունել ի գիտություն, որ պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի և Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի վրա:

7.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ